## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-22/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով Նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման /Բարձրաքաշ/ ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

**Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 03.12.2021թ. ժամը 12:00-ին Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:**

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Հովսեփյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Լուսինե Իգիթյան /գնահատող/
Խորեն Մնացականյան /գնահատող/
Արմինե Ստեփանյան /բացող/
Վերգինե Սահակյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

**1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

1.1 ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-22/10 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-22/10 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Էլ. Հասցեները |
|---|---|---|
| 1 | <<ՃՇՀԱՀ>> հիմնադրամ | gnumner.nuaca@gmail.com |

**3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

**4. Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

4.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես՝ բացակայում են նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերը, դրանց պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերը, առաջարկվող աշխատակազմի մասին տեղեկանքը, աշխատակազմում ներգրավված մասնագետների համապատասխան փաստաթղթերի պատճենները:

5. Մասնակցի առաջարկած գինը.

| Չափաբաժին | Նախահաշվային գինը, ՀՀ դրամ | Մասնակցի անվանումը | |
|---|---|---|---|
| | | <<ՃՇՀԱՀ>> հիմնադրամ | |
| | | Առաջարկված գինը, ՀՀ դրամ | |
| | | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ |
| 1 | 12962960 | 12500000 | 15000000 |

* Մասնակցի գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը:

**6. Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին**

6.1 Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը ուսումնասիրելուց հետո ս.թ. դեկտեմբերի 8-ին ժամը 11:00-ին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 08.12.2021թ. ժամը 11:00-ին**

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Հովսեփյան
Հանձնաժողովի անդամ՝ Լ. Իգիթյան
Խ. Մնացականյան
Ա. Ստեփանյան
Վ. Սահակյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

**7. Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

7.1 <<ՃՇՀԱՀ>> հիմնադրամի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Հավելված N 1.2 իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում խախտված է հերթական համարակալումը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**8. Գնահատման գործընթացի կասեցման մասին.**

8.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել <<ՃՇՀԱՀ>> հիմնադրամին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 4.1 և 7.1 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

8.2 Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել 2021թ դեկտեմբերի 10-ին, ժամը 11:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 303 սենյակ հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 10.12.2021թ. ժամը 11:00-ին**

**Մասնակցում էին՝**

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Հ. Հովսեփյան |
| Հանձնաժողովի անդամ՝ | Լ. Իգիթյան |
| | Խ. Մնացականյան |
| | Ա. Ստեփանյան |
| | Վ. Սահակյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Մարգարյան |

**9. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.**

9.1 <<ՃՇՀԱՀ>> հիմնադրամի կողմից սահմանված ժամկետում շտկվել են գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվա անհամապատասխանությունները:

- ***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**10. Գնահատման գործընթացի կասեցման և բանակցությունների կազմակերպման վերաբերյալ.**

10.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 40-րդ կետի 5-րր ենթակետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և հրավիրել <<ՃՇՀԱՀ>> հիմնադրամին հայտով ներկայացված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների ս.թ. դեկտեմբերի 14-ին ժամը 11:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 14.12.2021թ. ժամը 11:00-ին**

**Մասնակցում էին՝**

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Հ. Հովսեփյան |
| Հանձնաժողովի անդամ՝ | Լ. Իգիթյան |
| | Խ. Մնացականյան |
| | Ա. Ստեփանյան |
| | Վ. Սահակյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Մարգարյան |

<<ՃՇՀԱՀ>> հիմնադրամի ներկայացուցիչ Վանիկ Աթանեսյան

**11. Գնման գործընթացին հայտ ներկայացրած մասնակիցների հետ միաժամանակյա բանակցությունների վարման մասին**

11.1 Նիստին ներկա <<ՃՇՀԱՀ>> հիմնադրամի ներկայացուցչի հետ հայտով առաջարկված գնիի նվազեցման նպատակով կազմակերպել բանակցություն՝ սահմանելով 2 րոպե տևողությամբ ժամանակ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

11.2 Միաժամանակյա բանակցությունների վարման համար սահմանված վերջնաժամկետի ավարտին <<ՃՇՀԱՀ>> հիմնադրամի կողմից ներկայացվել է նոր գնային առաջարկ (հիմք՝ Հավելված 1):

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**12. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**

12.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը առաջին տեղ զբաղեցրած՝ ընտրված մասնակից ճանաչել <<ՃՇՀԱՀ>> հիմնադրամին

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**13. Գնահատման արդյունքների մասին.**

13.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հիմք ընդունելով ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ առանց անգործության ժամկետ սահմանելու, ընտրված մասնակցին, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Գնահատող հանձնաժողով՝

------------------------- Հ. Հովսեփյան /նախագահ/

------------------------- Լ. Իգիթյան

------------------------- Խ. Մնացականյան

------------------------- Ա. Ստեփանյան

------------------------- Վ. Սահակյան

------------------------- Ա. Մարգարյան /քարտուղար/